Թւ. ՌՀԱ: Ես՝ Դաւիթ իշխան, որդի Շոթռկաէ գնեցի զՌոնակ,
Գոմուց կէսն եւ շինական մի ի Հալալաշինի, մշակն, լմնած-
ուխ, եւ զպղիտակ սբ նշան եւ Բ շուրջառ ընծաեցի յԱծ-
ածինս: Եւ առաջնորդ սբ ուխտիս տր Յոհաննէս եւ միաբանքս էտուն
զսբ Գրիգորի տաւնն, որ հետ եղիական՝ պշաբաթն եւ զկիւրակէն զեկեղէ-
ցիքս պշաբաթն աւրն ինձ՝ Դաւթի եւ Կարճկա եւ զկիւրակ-
է աւրն Սարգսի եւ Տերբարքին: Արդ, որ զմեր ընծայս հանէ յ-
այս եկեղեցոյս Յուդաի եւ Կաէնի մասնակից լիցի եւ
մեր մեղացս տէր է առաջի Քի. ամէն

Ծանոթություն.— *1. Առաջին տողում* Շոթռկաէ *(ուղղ. հոլ. Շոթռռիկ, տես ԱԾ հտ. Դ, էջ 178) բառի մեջ* է-*ն կարող է ավելորդ լինել, քանի որ նա բացառական մասնիկ չէ և միանգամայն ակնհայտ է, որ Դավիթն է Շոթռռկա որդին և ոչ թե մեկ ուրիշը: Այս Շոթռռկի որդի Դավիթը հիշատակված է նաև Զաքարե ամիրսպասալարի Սանահնին տված հրովարտակի մեջ, որ պետք է պատկանի 1214 թվին (Քոթ., էջ 56): Այնտեղ գրած է՝ «Եւ ես այլ հաստատեցի ընծայ, զոր Դաւիթ իշխան որդի Շոդըռկայ գնեալ էր զՌոնակն եւ տվեալ ի դուռն սբ Ածածնիս»:*

Հավանական չէ, որ արձանագրության կազմողը Շոթռկաէ *բառի մեջ* է *գիրն ավելացրել է իբրև էական բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմք, մոռանալով, որ արձանագրությունն սկսել է առաջին դեմքով:*

Շոթռկաէ-*ն* Շոթռռիկ-*ի սեռական հոլովն է եղել արձանագրությունը կազմողի բարբառում՝* Դաւիթ Շոթռկաէ որդի,— Դաւիթ Շոթռռկի որդի-ի:

2. Այլ տեղեկություններից մեզ հայտնի է, որ Զաքարե ամիրսպասալարը Ռոնակի գոմերն ամբողջապես է նվիրել Սանահնին, իր ունեցած չորս կոպար տարածությամբ (Քոթ., 58—59):

Գոմ (գոմեր) կոչվել են և այժմ էլ կոչվում են նաև անասունների ձմեռային արոտավայրերում (գլխավորապես ոչխարինը) շինած գոմերը:

3. Երկրորդ տողի վերջին և երրորդի սկզբին լմնածուխ *կամ* լմանծուխ *մեզ անհասկանալի տարկայի անուն է:*

4. Երրորդ տողում սպիտակ սբ նշան *պետք է հասկանալ* արծաթի խաչ:

5. Յոթներորդ տողում Տերբարքին-*ը* Տերբարիք *անձնանվան սեռականն է (տես Ոււում., Ա. 33):*

6. Վեցերորդ տողում Կարճիկ *անձնանվան* Կ *գրի երկրորդ ոտեղը երկար լինելու պատճառով շատերը* Վ *են կարծել և կարդացել են* վարճիկ, *որ սխալ է:*

Ամենափրկչի ժամատան մեջ են թաղված այս արձանագրության մեջ հիշվող Կարճիկը, Տերբարիքը, Սարգիսը *(արձ. 76, 78, 79):*

Տարընթերցում.— *1. 2—3-րդ տողում* Լմնածուխ Ղրիմ *կարդացել է* Լ մասն ծուխ *(30 մասն հող) և տողատակի ծանոթության մեջ նշել, որ այդ բառերն անհասկանալի են:*

2. 6-րդ տողի Կարճկա *բառը Ջալ կարդացել է* Վարճկա:

16. Ամենափրկչի ժամատան հս պատին դրսից, նախորդից վերեվ: Այժմ մեծ ժամատան մեջ

(Լուս. № 33)

Հ Ջէ Մ 1258

Հրատարակված է՝ Ջալ 19—20, Ղրիմ 61, Վիմ 101